

քելու և առաջին անգամ նրանց գեղեցկութիւնը ճանաչելու պատիւը, մի հանճարեղ, շնորհալի երաժշտագէտ է. սրովհետեւ այդ երգերից շատերը յարմարացրել է երգեհոնի կամ խմբերգի, ուր ցոյց է տալիս շատ ճիշտ և նուրբ ըմբռնումն՝ պահելով ազգային առանձնայատկութիւնը և երանգը:

Ա. Յարութիւնեան.

ԳՐԱԽՈՍՈՍՈՒԹԻՒՆ

ԵՒ

ԸՆԴԴԻՄԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Կառլ Մենդելսոնն Բարբուրու Պատմութիւն Յունաստանի Ալի փաշա և Հետերիա. թարգմ. Ստեփան Կանայեանց, Վաղարշապատ, 1906 թ., դինն է 75 կ.:

Պարոն Կանայեանցը ճաշակ և ընտրութեան շնորհք է ցոյց տուել այսպիսի մի գեղեցիկ և մեր կեանքին համապատասխան բովանդակութիւն ունեցող երկի թարգմանութեամբ. ցանկ կարող ենք միայն, որ գրքի ամբողջական թարգմանութիւնը չունինք մեր առաջ, այլ Ա. հատորի (ամբողջը բաղկացած է երկու հատորից) երկրորդ գիրքը միայն. յուսանք, թէ թարգմանիչը կաշխատէ ըստ կարելւոյն շուտ նոյն աշխատութեան մնացած գրքերն էլ հրատարակել, որով հայ ընթերցող և յատկապէս երիտասարդ հասարակութեան գնահատելի ծառայութիւն արած կլինի:

Այս գիրքը նկարագրում է միայն յուսաց ապստամբութեան մի շրջանը՝ այն է Ալի փաշայի և Հետերիայի (ընկերութիւն) հանդէս գալը և այդ երկու երեւոյթների

նշանակութիւնը յունական ազատութեան պատմութեան համար: Բայց հէնց այսքանն էլ շատ խրատական նիւթեր է տալիս այն ազգերի համար, որոնք տոգորուած են նման գաղափարներով: Պատմութիւնը կեանքի ուսուցիչն է, կուրութիւն կլինէր մեզ համար չօգտուել այն ազգերի վերածնութեան պատմութիւնից, որոնք հեծել են դարերով նոյն տէրութեան լուծի տակ, ինչպէս և մեր ժողովուրդը: Հեղինակը իւր այս գրքի մէջ այն միտքն է անցկացնում կարմիր թելի նման, թէ յոյները որքան և քաջ, անձնուէր, բայց իրենք իրենց անկարող էին թոթափել տաճկաց ծանր լուծը, եթէ չլինէին արտակարգ և յաջող հանգամանքներ, այդ հանգամանքներն էին Տաճկաց տէրութեան թուլութիւնը և մաքերի շփոթութիւնը եւրոպական քաղաքակրթութեան արտաքին ազդեցութեամբ, Ալի փաշայի հանդէս գալը, զօրանալը և ի վերջոյ թշնամութիւնը Տաճկաց հետ, օտար պետութիւնների բռնած դիրքը դէպի Տաճկաստանն ու յոյները, բալկանեան միւս ցեղերի մէջ յառաջ եկած շարժումները և վերջապէս յոյն ժողովրդի իքնապահպանութեան զգացումը:

Ժ2. դարի կէսերից արդէն սկսում է ընկնել, քայքայուել Տաճկաց ահեղ պետութիւնը. կատաղի և զինուորական թուրքերը մեղկանում են հետզհետէ, սուլթաններն անձնատուր են լինում կանանոցի հաճոյքներին, պաշտօնները վաճառում են, կալուածները կապալով տրւում: Եւրոպայում՝ գլխաւորապէս Աւստրիայում՝ Վալլենշտայնի օրով՝ ծագում է թուրքերին եւրոպայից դուրս քշելու գաղափարը, որի հասունութեան մեծ դարկ է տալիս Եւգեն դուքսի երեք կարեւոր յաղթութիւնները տաճկաց դէմ: Բայց աւելի տաք կերպով այս գաղափարին կպել էին Ռուսները. Պետրոս մեծ յարաբերութիւններ էր սկսել յոյների հետ նրանց համակրութիւնը վաստակելու համար. նորա նպատակն էր գրաւել Պոլիսը: Եկատերինայի ժամանակ աւելի գործնական կերպարանք է ստանում այս ձգտումը, և նա Աւստրիայի Յովսէփ կայսեր հետ լուրջ կերպով մտածում էր տիրել Բալկանեան թերակղզուն և

բաժանել երկու պետութեան մէջ: Մինչ այն յոյների մէջ
ևս զարթել էր ազատութեան գաղափարը և նոքա յոյս
ունէին Ռուսաց օգնութեամբ թոթափել թշնամու լուծը:
1770 թ. Ռուսաց նաւատորմիղը երևեցաւ յունական
ջրերում և Օրլովը նոյն իսկ յոյն կամաւորներից գնդեր
կազմեց: Սակայն կարճ ժամանակից յետոյ ջարդուեցան
նրանք և ոչնչացան: Յոյները մեծախօս էին և պակաս չէին
բաղաւաճելու անձինք, որոնք առանց հարկաւոր պատ-
րաստութեան և նախազգուշութեան ժողովրդի կեանքը
վտանգի էին ենթարկում: Այս շարժումը վերջացաւ
Քիւչիւկ Կայնարջիի դաշնագրութեամբ 1774 թ., որով
Ռուսները մի տեսակ հովանաւորի դեր էին ստանում
քրիստոնեաների վերաբերութեամբ: Այս դաշնագրութեան
հետեւանքն էր յունաց վաճառականութեան զարգացումը
Ռուսաց դրօշակի տակ: Մովսիսին վաճառականութիւնը
նաւատորմիղ ստեղծեց, որ ապագայում դեր պիտի կա-
տարէր. իսկ նիւթական հարստութեան հետ ծաղկեց և
քաղաքակրթութիւնը:

Թուրքիոյ քայքայումը շարունակուում է այնուհետեւ
Ֆրանսիական յեղափոխութեան ազդեցութեամբ և հե-
տեւանքներով: 1790 — 93 թուին Ռուսները իրական օգ-
նութիւն չկարողացան ցոյց տալ յոյներին, ուստի և վեր-
ջիններս իրենց ուշքը դարձրին Ֆրանսիացիների վերայ,
մանաւանդ նապոլէոնի եգիպտոս արշաւելու ժամանակ:
Ֆրանսիական յեղափոխութեան և ազատութեան գաղա-
փարներն աւելի ցնցեցին յոյներին, Ռիգասի առաջնոր-
դութեամբ կազմուեցաւ Հետերիան, բայց շուտով հիմնա-
դիրը զոհ դարձաւ իւր թեթեամտութեան:

Սակայն յոյների գործին աւելի նպաստեց թուրքիայի
քայքայումը և փառասէր փաշաների ապստամբութիւնը
կեդրոնի դէմ, ինչպէս Վիդզինի Պասուան Օղլին, եգիպ-
տոսի Մեհմէտ Ալին և յատկապէս Եանինայի Ալին: Վերջինս
ապստամբութիւնը Սուլթանի դէմ և յունաց գաղտնի
Հետերիա ընկերութիւնը պատրաստեցին 1821 թ. իսկա-
կան ապստամբութիւնը: Հեղինակը բաւական մանրամասն

նկարագրում է յունական ապստամբութեան մէջ կարեոր դեր կատարած այս երկու երեղթների ծագումն ու պատմութիւնը: Շատ հետաքրքրական է Ալի փաշայի աւագակութիւնից վասալական ընդարձակ իշխանապետութեան հասնելու նկարագրութիւնը, յատկապէս նրա մղած պատերազմները ալբանական ծագում ունեցող, բայց քրիստոնեայ Սուլեյմների դէմ: Այս մի բուռն ժողովրդի հայրենասիրական առաքինութիւնն ու քաջութիւնը հին Յունաստանի և Հռոմի հերոսներն է յիշեցնում: Ալին, որ Սուլեյմների ընկճելուց յետոյ՝ յոյների դէմ է արշաւում և Թեսալիայի շարժումը ճնշում, ստիպուած էր ի վերջոյ դաշինք կապել նրանց հետ ընդդէմ Սուլթանի: Այս հանգամանքն էլ նպաստում է 1821 թուի ընդհանուր ապստամբութեան:

Գիրքը կարդացւում է մեծ հետաքրքրութեամբ, ինչպէս մի վէպ. գրուիչ են յատկապէս հերոսական գործողութիւնների սահուն նկարագրութիւնները: Թարգմանութեան լեզուն կարելի է ընտիր համարել չնչին բացառութիւններով: Խորհուրդ ենք տալիս կարդալ այս գիրքը, որ խրատական է խելահասների և ոգևորիչ մատաղ սերունդի համար:

Գ. Վ. Յովսէփեան

ՊԱՏԱՍԽԱՆ

«Անապատականներ և վանականութիւն» աշխատասիրութեան մատենախօսութեան առիթով, որ գրել է Հ. Երուանդ վարդապետը, հարկ եմ համարում ասել, որ այդ աշխատասիրութեան նպատակը եղել է ցոյց տալ, թէ ինչպէս սկսուեց, զարգացաւ և նսեմանում է անապատականութիւնն ու կրօնաւորութիւնը:

— Յովհաննէս Մկրտչի ծննդեան մասին խնդրեմ կարդալ Ղուկասի աւետարանի առաջին գլուխները: